

Գործարարության աջակցման խորհրդի  
գործարար համայնքի նիստի

04.07.2008թ.

ք. Երևան

Նախագահում էր՝

Վ. Ներսիսյանց - ՀՀ նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, խորհրդի փոխնախագահ

Մասնակցում էին՝

- Ռ. Հարությունյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, խորհրդի քարտուղար
- Դ. Աթանեսյան - «Ամերիկյան առևտրի պալատը Հայաստանում» ԻԱՄ-ի նախագահ
- Ա. Դավթյան - «Ագրոբիզնեսի զարգացման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
- Ն. Նահապետյան - «Ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի անվան Գյումրիի հիդրոէլեկտրակայան» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
- Ս. Գևորգյան - «Բիզնես Սուփորթ Սենթր» ՓԲԸ-ի տնօրեն
- Ռ. Շահմուրադյան - «Շինանյութ Ներկրողների Միություն» ՀԿ-ի նախագահ
- Ա. Հովեյան - «Արպեգ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն
- Ա. Ավետիսյան - «Բիո-քիմ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն
- Ռ. Ծառուկյան - «Մուլտի - Ագրո» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
- Ֆ. Միրնոյան - Հայաստանում տուրիզմի զարգացման հիմնադրամի գլխավոր տնօրեն
- Է. Գրիգորյան - «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ
- Է. Քոքսշելլ - «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ-ի ղեկավար գործընկեր
- Կ. Անդրեասյան - «Տրաստ Թրավլ Ընդ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն
- Ա. Խուդոյան - ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության մամուլի քարտուղար
- Ա. Զարգարյան - ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հարկային բարեփոխումների վարչարարության բաժնի պետ
- Ա. Կուրբանյան - ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գլխավոր հարկային տեսուչ
- Ս. Հայրապետյան - ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Սպանդարյան 1 տարածքային տեսչության պետ
- Ս. Ոսկանյան - ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության ավագ հարկային տեսուչ
- Գ. Քառյան - ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի մաքսային գործի կատարելագործման բաժնի պետ
- Գ. Մակարյան - «Հայաստանի գործատուների հանրապետական միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն
- Մ. Սարգսյան - ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատի ԳԱԲ պետ
- Տ. Խաչատրյան - «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն
- Կ. Գյոզալյան - «Մոլարեն» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ
- Լ. Հարությունյան - Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի ավագ խորհրդատու
- Ժ. Արամյան - Գործարարության աջակցման հարցերի քարտուղարության պետ
- Հ. Տորտիկյան - Գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Օ. Հայրապետյան - Գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար

- մասնագետ
- Ա. Գասպարյան - Գործարարության աջակցման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Մ. Մելիքյան - ՋՀԳ հասարակայնության հետ կապերի մասնագետ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Գործարարության աջակցման խորհրդի գործարար համայնքի հետագա աշխատանքների ակտիվացման մասին:
2. Հայաստանի Հանրապետությունում հարկային վարչարարության կատարելագործման հայեցակարգի նախագծերի և գործողությունների (միջոցառումների) ժամանակացույցի վերաբերյալ առաջարկությունների քննարկման մասին:

### 3. Այլ հարցեր

1. Գործարարության աջակցման խորհրդի գործարար համայնքի հետագա աշխատանքների ակտիվացման մասին:

---

(Վ. Ներսիսյանց, Ռ. Հարությունյան, Տ. Խաչատրյան, Է. Գրիգորյան, Լ. Հարությունյան,  
Գ. Սակարյան)

Նիստը բացեց գործարարության աջակցման խորհրդի /այսուհետև՝ խորհուրդ/ փոխնախագահ, ՀՀ նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական՝ Վ.Ներսիսյանցը: Նա ողջունեց գործարարության աջակցման խորհրդի անդամներին, հակիրճ ներկայացրեց խորհրդի գործունեության ոլորտները, կազմակերպչական կառուցվածքը և մինչ այժմ կատարած աշխատանքները: Նա առաջարկեց աշխատանքային խմբեր ստեղծել, որոնք կգրադվեն գործարարների բարձրացրած հիմնախնդիրների և առաջարկությունների վերհանմամբ և կառավարությանը կներկայացնեն առաջադրված խնդիրները:

Ելույթի խոսքով հանդես եկավ նաև «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, գործարարության աջակցման խորհրդի քարտուղար Ռ. Հարությունյանը՝ նշելով, որ այս նիստերի միջոցով փորձ է արվելու գործարարներին բացատրել, թե ի՞նչ քայլեր է կառավարությունն իրականացնում այդ ուղղությամբ: Նա շեշտեց, որ շատ կարևոր է նրանց կողմից ստանալ հակադարձ կարծիք և ապահովել կառավարության քայլերի իրազեկումը մասնավոր հատվածին: Մի կողմից՝ պետական քաղաքականության և ծրագրերի ներկայացումը մասնավոր հատվածին և մյուս կողմից՝ մասնավոր հատվածի կողմից բարձրացված հիմնախնդիրները հնարավորություն կտան առավել արդյունավետ կազմակերպել աշխատանքները: Եվ վերջում նա գործարարներին ներկայացրեց կառավարության հորդորն այն մասին, որ չափազանց կարևոր է մասնավոր հատվածի և պետության համագործակցության խորացումն ու շփումների հաճախականությունը:

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն Տ. Խաչատրյանն առաջարկեց աշխատանքային խմբերը ձևավորել ըստ խնդիրների առաջնայնության:

«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ Է. Գրիգորյանն իր մտահոգությունը հայտնեց այն մասին, որ ներկա ժամանակաշրջանում գործարարների մասնակցությունն օրենսդրական փաստաթղթերի ձևավորմանը խիստ կրճատվել է և հույս հայտնեց, որ խորհրդի նիստերի առավել հաճախակի հրավիրման պարագայում կխորանա պետություն – մասնավոր հատված համագործակցությունը:

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի ծրագրային գրասենյակի ղեկավար Լ. Հարությունյանն իր խոսքում նշեց, որ գործարարության աջակցման խորհրդի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ապահովել խորհրդի նիստերի կայուն հաճախականություն, իսկ աշխատանքը կարելի է կազմակերպել ինչպես կոնկրետ խնդրի քննարկման համար աշխատանքային խմբի ձևավորման, այնպես էլ մշտական գործող խմբերի ձևավորման միջոցով, որոնք կփոխլրացնեն միմյանց:

Հայաստանի գործատուների հանրապետական միության գործադիր տնօրեն Գ. Մակարյանը նշեց, որ գործարարության աջակցման խորհուրդը համարվում է կարևոր կառույց, որը կապ է ապահովում կառավարության բարձրագույն օղակների և մասնավոր հատվածի միջև: Նա նշեց, որ խորհուրդը թույլ է տալիս միմյանց հանդիպել, բավական ներդաշնակ աշխատանքային մեխանիզմով արձարծել բազմաբնույթ խնդիրներ և, որ պետությունը ձգտում է իր գործողությունների արդյունքում մեղմացնել վարչարարությունը և տարանջատել փոքր բիզնեսը միջինից, ինչը կնվազեցնի նաև կոռուպցիան:

2. Հայաստանի Հանրապետությունում հարկային վարչարարության կատարելագործման հայեցակարգի նախագծերի և գործողությունների (միջոցառումների) ժամանակացույցի վերաբերյալ առաջարկությունների քննարկման մասին:

---

(Վ. Ներսիսյանց, Ժ. Արամյան, Գ. Մակարյան)

Օրակարգի երկրորդ հարցի քննարկումից առաջ գործարարության աջակցման խորհրդի փոխնախագահ Վ. Ներսիսյանցը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ հարկային և մաքսային ոլորտներում իրականացվող բոլոր բարեփոխումները մշակութային փոփոխության բնույթ են կրելու, կառավարությունն առաջնորդվելու է միջազգային փորձով, որոնք տեղայնացվելու են:

Գործարարության աջակցման հարցերի քարտուղարության պետ Ժ. Արամյանը տեղեկացրեց, որ քարտուղարությունը դեռևս ստանում է առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում հարկային վարչարարության կատարելագործման հայեցակարգի նախագծերի և գործողությունների (միջոցառումների) ժամանակացույցի վերաբերյալ և խնդրեց խորհրդի անդամներին այցուհետ ավելի ակտիվ լինել: Նա նշեց, որ ՀՀ կառավարությունը բարեփոխումների շատ ակտիվ տեմպ է վերցրել և

գործարար աշխարհը պետք է ավելի կազմակերպվի և կարողանա անմասն չմնալ ընթացող ծրագրերից, ունենա իր ակտիվ մասնակցությունը կատարվող փոփոխություններում:

Նիստին, բացի գործարարներից, ներկա էին նաև ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության և մաքսային պետական կոմիտեի ներկայացուցիչները, որոնք գործարարներին ներկայացրեցին վարչարարության ոլորտում նախատեսվող միջոցառումների ժամանակացույցը և լսեցին գործարարների առաջարկությունները, որոնք վերաբերում էին, մասնավորապես՝ ընթացակարգերի պարզեցմանը, գերավճարների փոխհատուցմանը:

Այդ առումով, Հայաստանի գործատուների հանրապետական միության գործադիր տնօրեն Գ. Մակարյանը կարևորեց նաև հարկային համակարգում ներքին աուդիտի ստեղծման գաղափարը՝ նկատելով, որ ներկայում ստուգումների ընթացքում չի պահպանվում աուդիտի անկողմնակալությունը, այսինքն՝ ստուգում իրականացնող բոլոր մարմինները պետք է ունենան խորհրդատվական և կանխարգելիչ մեխանիզմ՝ ապահովելով նաև հետադարձ կապ:

Նիստի ավարտին խորհրդի փոխնախագահ Վ. Ներսիսյանը կոչ արեց խորհրդի անդամներին սեղմ ժամանակահատվածում խորհիդի քարտուղարություն ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ՝ դրանք ամփոփելու և խորհիդի առաջիկա նիստի քննարկմանը ներկայացնելու համար:

Խորհրդի քարտուղար՝

Ռ. Հարությունյան